ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 փետրվարի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

28
(2694)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՊԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՆ ՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում խոչընդոտում են ակտիվները գրանցել ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի փեսայի ընկերության անունով Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրողների իրավունքները խախտվում են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոր միջազգային սկանդալ է հասունանում, որը կարող է ՀՀ վարկանիշի վրա խիստ բացասական ազդեցություն ունենալ: Ինչի՞ մասին է խոսքը: Հայաստանում, որպես օտարերկրյա ներդրող, գրանցված են «ԶՌԼ ԲԵՏԱԼԻԳՈՒՆԳԱՍ ԱԳ»-ի իրավունքները «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ-ի անվանական բաժնետոմսերով: Ընկերության իրավունքները ֆիքսված են նաեւ ՀՀ կառավարության եւ Ավստրիայի Հանրապետության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ պաշտպանության մասին 01.02.2003թ.-ի միջազգային համաձայնագրով: «Ժողովուրդ» օրաթերթը, սակայն, ահազանգ է ստացել՝ առ այն, որ «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ-ի եւ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շարունակաբար խախտվում են «ԶՌԼ ԲԵՏԱԼԻԳՈՒՆԳԱՍ ԱԳ»-ի՝ որպես օտարերկրյա ներդրողի իրավունքները, որոնք փաստացի հանգեցնում են սեփականազրկման, ինչը միջազգային համաձայնագրի 5-րդ հոդվածով սահմանված սեփականության երաշխիքի իրավունք է: Պարզվում է՝ «ԶՌԼ ԲԵՏԱԼԻԳՈՒՆԳԱՍ ԱԳ» ընկերությունը, 2016 թ.-ից սկսած, փորձում է օգտվել իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի տնօրինման իրավունքից՝ օտարելով ու փոխանցելով բաժնետոմսերը՝ հօգուտ Ղազախստանում գրանցված «ԲՏԱ բանկ» բաժնետիրական ընկերության, սակայն տարաբնույթ անհիմն պատճառաբանություններով նշված գործարքը չի գրանցվում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, ավելին՝նույնիսկ չի ակտիվացվում «ԶՌԼ ԲԵՏԱԼԻԳՈՒՆԳԱՍ ԱԳ» ընկերության արժեթղթերի հաշիվը: Նման պայմաններում օտարերկրյա ներդրող հանդիսացող «ԶՌԼ ԲԵՏԱԼԻԳՈՒՆԳԱՍ ԱԳ» ընկերության իրավունքները կոպտորեն խախտվում են, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է նաեւ ՀՀ կենտրոնական բանկը, սակայն մինչ օրս որեւէ գործընթաց չի իրականացվել, չի ստուգվել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի՝ կենտրոնացված պահառուի, կենտրոնացված ռեեստրավարի, արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորի գործառույթների պատշաճ իրականացումը, չի իրականացվել վարչական վարույթ կամ ստուգում: Դժգոհություն կա՝ առ այն, որ նախկին ԲԴԽ նախագահ Գագիկ Ջհանգիրյանի միջամտությամբ «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ-ի օգտին կայացվել են մի շարք անօրինական դատական ակտեր՝ խախտելով օտարերկրյա ներդրողի իրավական պաշտպանությունը եւ անվտանգությունը: Օտարերկրյա ներդրողի օրինական պահանջն է ապահովել արժեթղթերի հաշվի ակտիվացումը եւ միջազգային պայմանագրով երաշխավորված ընկերությանը պատկանող բաժնետոմսերի սեփականության իրավունքի պաշտպանությունը եւ տնօրինումը: Հիշեցնենք, որ «ԲՏԱ» բանկը Ղազախստանում պատկանում է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Իմանգալի Տասմագամբետովի փեսային: Շարունակելի...

Այն, որ Նիկոլ Փաշինյանը սովոր է խաբելու եւ մանիպուլացնելու, գաղտնիք չէ ոչ մեկի համար: «Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար հրապարակել է, թե որ դեպքերում են նրա հայտարարությունները հակասել միմյանց: Այդպես է եղել նաեւ արցախյան 44-օրյա պատերազմի թեմայով: Նա 2020 թվականին պարբերաբար մանիպուլացրել է նաեւ Արցախում գտնվող զինվորների թիվը: Նոյեմբերի 9-ի գիշերը՝ եռակողմ հայտարարության ստորագրումից հետո, թաքնված ելույթ ունենալիս նա ասում էր, որ եթե հողերը չհանձներ, մեր 25 հազար զինվորները կկոտորվեին: Հետո Հանրային հեռուստաընկերության եթերում հայտարարեց՝ եթե հողերը չհանձներ, 20 հազար զինվոր կզոհվեր, եւ ինքն այդքանի կյանք փրկել է: Նոյեմբերի 16-ին խոսեց 30 հազար թվի մասին՝ դրանից ժամեր հետո խորհրդարանում ասելով, որ թիվը 35 հազար է եղել: Թերեւս պատճառն այն է, որ այս թեմայով նա այլեւս չի կարողանում համոզել, արդարանալ եւ ամեն անգամ ստիպված է էլ ավելի մեծ թիվ հորինել:

«Ես աշխատելու եմ այստեղ, մնալու եմ ձեր կողքին: Շնորհակալություն, պարոն նախագահ, ամեն ինչի համար, չնայած իսկապես մենք ունենք տարաձայնություններ տարբեր մոտեցումներում, բայց ընդհանուր գաղափարը, որ մենք ունենք, կարմիր գծեր, որ ոչ մեկին չի կարելի անցնել դրանք». սրանք Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի խոսքերն են, որոնք նա ասել է Արցախի կառավարության նիստի ժամանակ: Այդ օրը Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը հայտնեց Վարդանյանին պաշտոնից ազատելու իր որոշման մասին: Եվ, ահա, Վարդանյանի՝ Արցախում մնալու մասին հայտարարությունը շատերի կողմից դիտվեց բացառիկ հերոսություն: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախում մնալու Վարդանյանի պատճառները բոլորովին այլ են. դեռ նախորդ տարվանից էր պարզ, որ Արցախում պաշտոն ստանալուց հետո Ռուբեն Վարդանյանը Հայաստան չի գալու: Բանն այն է՝ ըստ Արցախում տարածված լուրերի՝ Ռուբեն Վարդանյանը Արցախի պետնախարար դառնալու ժամանակ միջնորդավորված ձեւով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել, ըստ որի՝ Ռուբեն Վարդանյանը չպետք է հաստատվի Հայաստանում, մասնակցի քաղաքական գործընթացներին եւ չպետք է հավակնի որեւէ պաշտոնի: Ահա այս պատճառով էլ անգամ պաշտոնից ազատվելուց հետո նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը կշարունակի բնակվել Արցախում:

ՔՊ խմբակցության պատգամավորները հաջորդ շաբաթ կհավաքվեն: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երկուշաբթի երեկոյան նախատեսվում է ՔՊ խմբակցության փակ նիստը ԱԺ-ում: Տեղեկացանք, որ նիստի օրակարգում լինելու է ՄԻՊ թեկնածուի հարցը: Ինչպես արդեն գրել ենք, ՔՊ-ականների համար իսկական «պատիժ» է դարձել այդ հարցը. մի կողմից՝ ուզում են այս պաշտոնում իսկապես պրոֆեսիոնալ թեկնածու առաջադրել, մյուս կողմից էլ՝ բոլոր այն մասնագետներին, ում առաջարկում են իրենք, հրաժարվում են առաջադրվել, ուստի ՔՊ-ականները մտադիր են այդ օրվա նիստում վերջնական համաձայնության գալ ՄԻՊ-ի մասով: Հնարավոր է՝ արդեն հենց իրենց խմբակցության պատգամավորներից որեւէ մեկին առաջադրեն: Բացի այս հարցից, քննարկվելու են երեքշաբթի օրը մեկնարկելիք ԱԺ նիստերի օրակարգում ընդգրկված հարցերը: Նկատենք, որ ԱԺ այս նստաշրջանի օրակարգում դեռ ընդգրկված է ընդամենը 7 հարց, ուստի նստաշրջանը կարճ կտեւի՝ հաշվի առնելով նաեւ, որ ՔՊ-ականները գրեթե բոլոր նախագծերը իրենցով ընդունում են, առանց բովանդակային լուրջ քննարկման:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԻՆՉՈ՞Ւ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՉԷՐ ԽՈՍՈՒՄ

Օրեր առաջ ՀՀ ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ քննարկվել է նաեւ ՀՀ կարեւոր ճանապարհների գիշերային լուսավորության հարցը, որի ժամանակ ԱԺ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը հարց է բարձրացրել այն մասին, որ Երեւան-Հրազդան մուտք հանդիսացող ճանապարհի լուսավորության համար մալուխներն անցկացվել են ոչ թե գետնանցումով, այլ օդային տարբերակով՝ այուների վրայով, եւ այդ աշխատանքների նախագիծը ստորագրողն էլ խնդիր ունի: Այս հարցի շուրջ զրուցել ենք Հրազդան համայնքի ղեկավար Սեւակ Միքայելյանի հետ եւ փորձել մանրամասներ պարզել:

-Պարոն Միքայելյան, նախագիծը կազմելիս արդյոք չե՞ք դիտարկել Երեւան-Հրազդան մուտք հանդիսացող ճանապարհահատվածի մալուխները գետնանցումով անցկացնելու տարբերակը:

-Ճիշտն ասած, ինձ համար զարմանալի է ՀՀ ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ բարձրացված այդ հարցը, տեսանյութը չեմ տեսել եւ չեմ կարծում, որ Խաչատուր Սուքիասյանը նման հարց կբարձրացներ, որովհետեւ ճանապարհի լուսավորության եւ անվտանգության առումով լավ աշխատանքներ են կատարվել: Նշեմ, որ Հրազդան համայնքի մուտք հանդիսացող հայ ֆիդայիներ փողոցը երբեւիցե լուսավորված չի եղել, այն տարիներ շարունակ ամբողջությամբ մթության մեջ էր գտնվում, որի հետեւանքով այդ ճանապարհահատվածում տեղի են ունեցել բազմաթիվ վթարներ, անգամ գրանցվել են մահվան դեպքեր:

Իհարկե, նախագիծ պատվիրելիս նաեւ դիտարկել ենք գետնանցումով անցնելու տարբերակը: Մինչ նախագիծ կազմելը տարածքում իրականացվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում ի հայտ են եկել կումունիկացիաների խնդիրներ (գազատար խողովակ եւ հաղորդակցման մալուխներ), որոնք կխոչընդոտեին գետնանցումով տանելու աշխատանքներին: Նշեմ նաեւ, որ լուսավորության համար նախատեսված հենասյուներն են անգամ մեծ դժվարությամբ տեղադրվել: Ինձ համար առաջնային էր ճանապարհի լուսավորության հարցը՝ առաջինը՝ անվտանգային, երկրորդ՝ քաղաքի արտաքին տեսքի բարելավման առումով, քանի որ այդ ճանապարհահատվածը հանդիսանում է նաեւ որպես քաղաքի մուտք: Երբ ճանապարհը երկար տարիներ լուսավորված չէր, ինչո՞ւ պարոն Սուքիասյանը այդ ժամանակ չէր բարձրաձայնում խնդրի մասին. ինձ համար հետաքրքիր է նաեւ այս հանգամանքը:

Հիմա կարեւոր աշխատանքներ են կատարվել, լուսավորության եւ անվտանգության խնդիր է լուծվել, նոր միայն խոսում են գետնանցումով տանելու խնդրի մասին: Հանձնաժողովի նիստի ժամանակ այդ հարցը բարձրաձայնելուց առաջ, որպես ԱԺ պատգամավոր, Խաչատուր Սուքիասյանը կարող էր այդ հարցով դիմել ինձ:

-Խաչատուր Սուքիասյանը նշել է նաեւ, որ նախագիծը ստորագրողն էլ խնդիր ունի. ի վերջո, Դուք այդտեղ խնդիր տեսնո՞ւմ եք:

-Միակ խնդիրը ճանապարհի՝ տարիներ շարունակ չլուսավորված լինելն էր: Այժմ հետիոտն ու վարորդները այս ճանապարհահատվածով երթեւեկում եւ տեղաշարժվում են անվտանգ:

-Եթե տոկոսային հարաբերության վերածելու լինենք, ապա Հրազդան համայնքի քանի՞ տոկոսն է լուսավորված:

-Համայնքի ղեկավարի պարտականությունները ստանձնելուց հետո՝ այս չորս տարիների ընթացքում, արտաքին լուսավորության համակարգն ապահովվել է շուրջ 80-90 %-ով: Բացի ընդլայնումը, լուծել ենք նաեւ արտաքին լուսավորության համակարգի արդիականացման խնդիրը. նախկին՝ նատրիումային լամպերը փոխարինվել են նոր՝ լեդ լուսատուներով: Հրազդան համայնքում արտաքին լուսավորության համակարգն ամբողջությամբ արդիականացված է:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԱՀԱՔԱՆԳՈՒՄ Է

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Այսօր Արցախի շրջափակման 75-րդ օրն է: Ինչպես գիտենք, արցախահայության համար այս ծանրագույն փուլում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը 2023թ. փետրվարի 22-ին հրապարակեց արդարամիտ որոշում. Հայաստանի կողմից ներկայացված հրատապ միջոցների առնչությամբ Դատարանն արձանագրեց, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ կապը Լաչինի միջանցքով խաթարվել է:

Լաչինի միջանցքով տեղաշարժի խափանումը խոչընդոտել է Լեռնային Ղարաբաղում հոսպիտալացված հայ ազգային կամ էթնիկական պատկանելիություն ունեցող անձանց Հայաստանի բժշկական հաստատություններ անհետաձգելի բժշկական օգնության համար տեղափոխմանը, խոչընդոտներ են առկա Լեռնային Ղարաբաղ առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծման համար՝ առաջացնելով սննդի, դեղորայքի եւ կյանքի համար անհրաժեշտ այլ բժշկական պարագաների պակաս:

Դատարանը բավարարեց Հայաստանի՝ ժամանակավոր միջոց կիրառելու պահանջը եւ պարտավորեցրեց Ադրբեջանին մինչեւ «Հայաստանը՝ ընդդեմ Ադրբեջանի» գործով վերջնական որոշման կայացումը ձեռնարկել բոլոր միջոցները՝ երաշխավորելու Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը:

Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրության 59-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանի որոշումը պարտադիր է միայն գործին մասնակցող կողմերի համար եւ միայն տվյալ գործով:

Կանոնադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ որոշումը վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման:

Ադրբեջանը, սակայն, ոտնահարում է նույնիսկ ՄԱԿ-ի հիմնական դատական մարմնի կանոնադրության առանցքային դրույթները.

Արդարադատության միջազգային դատարանի վերոնշյալ որոշումից անցել է արդեն շուրջ 2 օր, սակայն Ադրբեջանը գործում է հերթական հանցագործությունը՝ շարունակելով արգելափակել Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը:

Հրատապ գրություն եմ ուղարկել միջազգային բոլոր գործընկերներիս՝ ահազանգելով ստեղծված իրավիճակի վերաբերյալ եւ խնդրելով իրենց մանդատի շրջանակներում.

-նպաստել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի կողմից կայացված միջանկյալ միջոց կիրառելու մասին որոշման կատարմանը,

-ներկայացնել այս ուղղությամբ նրանց կողմից ձեռնարկված կամ ձեռնարկվելիք քայլերը»:

ՊԵՏԵՐ ՉԿԱՆ

ՀՀ կառավարությանը ենթակա Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, չնայած շատ կարեւոր գործառույթներ ունի կատարելու, որպեսզի շարունակ կրկնվող հրդեհները գոնե չլինեն, սակայն դրա համար անհրաժեշտ աշխատակազմը մասամբ է համալրված: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, օրինակ, պետ չունեն Իրավական աջակցության եւ փաստաթղթաշրջանառության վարչությունը, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության վարչությունը, Էներգետիկայի եւ էներգասպառման վերահսկողության վարչությունները, ինչպես նաեւ Երեւանի քաղաքաշինական գործունեության, գեոդեզիայի եւ հողօգտագործման վերահսկողության բաժանմունքը: Կան նաեւ բաժիններ, որոնք թափուր հաստիքներ ունեն: Թափուր է նույն Իրավական աջակցության եւ փաստաթղթաշրջանառության իրավաբանական բաժնի պետի, Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչության քաղաքաշինական վերահսկողության բաժնի պետի պաշտոնները: Իսկ ինչո՞վ է զբաղված այս կառույցը: Պաշտոնական կայքում վերջին նորությունը հրապարակվել է այս տարվա հունվարի 13-ին՝ որպես իրազեկում վերելակների փորձաքննության պարտադիր լինելու վերաբերյալ: Այս կառույցն ակտիվ է ֆեյսբուքյան էջում եւ պարբերաբար հայտնում է այս կամ այն ընկերության աշխատանքը դադարեցնելու որոշման մասին:

ՉԻ ՎԵՐԱՀՍԿԻ

Արցախի պետական նախարարի համակարգման ոլորտում Արտաքին գործերի նախարարությունն այլեւս չի լինի: Ինչպես հայտնի է, Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով՝ Ռուբեն Վարդանյանը երեկ՝ փետրվարի 23-ին, ազատվել է պետական նախարարի պաշտոնից: Նախագահը կառավարության նիստին հայտարարել է, որ պետական նախարարի պարտականություններն առաջարկել է ստանձնել հանրապետության գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանին: Վերջինս ընդունել է նախագահ Արայիկ Հարությունյանի՝ պետնախարարի պարտականությունները ստանձնելու առաջարկը:

Երեկ կառավարության նիստում, երբ Արայիկ Հարությունյանը հայտարարեց Ռուբեն Վարդանյանին պաշտոնից ազատելու մասին, նա հայտնեց, որ նոր պետական նախարարի համակարգման ոլորտում են լինելու բոլոր գործադիր մարմինները, բացառությամբ ուժային մարմինների եւ Արտաքին գործերի նախարարության: Մինչեւ այժմ պետնախարարի վերահսկողությունից դուրս էին միայն ուժային մարմինները:

Այժմ արտաքին գործերի նախարարը Սերգեյ Ղազարյանն է, որը մինչ այս Հայաստանում Արցախի ներկայացուցիչն էր: Վերջինս Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի մտերիմներից է, եւ հենց նա է Մոսկվայում ուսանած Ղազարյանին հրավիրել Արցախ եւ պաշտոն առաջարկել:

ԿԱՏԱՐԵՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը երեկ պաշտոնից ազատեց պետնախարար Ռուբեն Վարդանյանին: Պետնախարար կնշանակվի Արցախի դատախազ Գուրգեն Ներսիսյանը: Արայիկ Հարությունյանը Վարդանյանին պաշտոնանկ անելու կոնկրետ պատճառաբանություն չի ներկայացրել՝ սահմանափակվելով հետեւյալ նախադասությամբ. «Մեր բոլորիս եւ պետության՝ բոլոր առումներով դիմադրողականությունը չսպառելու համար որոշում եմ կայացրել Ռուբեն Վարդանյանին ազատելու պետական նախարարի պաշտոնից»: Արայիկ Հարությունյանի այս որոշումը տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել, այդ թվում՝ այն մեկնաբանվել է որպես «Ադրբեջանի թելադրանքի կատարում»:

ArmLur.am-ի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը նշում է՝ Ադրբեջանի ասածները, թե իրենք պետք է կառավարեն Արցախի քաղաքական կյանքը, մինչ այս հեքիաթ էր թվում, սակայն հիմա արդեն իրականություն են կարծես դառնում: «Արայիկ Հարությունյանը երեկ կատարեց Ադրբեջանի պահանջը. այն կատարելու ուղղությամբ ճնշում կար նաեւ Հայաստանի իշխանությունների կողմից: Այս քայլին նա գնաց՝ մեջքով շրջվելով Արցախին եւ արցախցիներին»,- ասաց նա:

ԿՆԵՐԳՐԱՎՎԵՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից պահեստազորայինների վարժական հավաքների համար կներգրավվեն տրանսպորտային միջոցներ: Այդպիսի կանոնակարգում է առաջարկվում «Վարժական հավաքներ հայտարարելու եւ դրա ապահովման համար ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմինների տրանսպորտային միջոցները ներգրավելու մասին» Կառավարության որոշման նախագծով:

Հիմնավորման մեջ նշվում է. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է Զինված ուժերում ունենալ մարտունակ ստորաբաժանումներ՝ համալրված բարձր մասնագիտական պատրաստվածությամբ եւ ռազմաուսուցված պահեստազորայիններով, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցներով, նպատակահարմար է պահեստազորայիններին վարժական հավաքների ընդգրկումը՝ ներգրավելով մարտական հերթապահության, իսկ վարժական հավաքների ապահովման համար՝ ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից տրանսպորտային միջոցների ներգրավումը:

Այս նպատակով Զինված ուժերի զորամասերում իրականացվում են պահեստազորայինների ռազմական հմտությունների կատարելագործման, վերապատրաստման եւ պատրաստման վարժական հավաքներ, ու զորքերն աստիճանաբար համալրվում են ավելի պատրաստված եւ անհրաժեշտ զինվորական հաշվառման մասնագիտություն ունեցող պահեստազորայիններով:

ԱՄՓՈՓ

ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ

2022 թվականի փետրվարի 24-ի վաղ առավոտյան սկսվեց ռուս-ուկրաինական պատերազմը: Այդ օրը հրթիռներ են արձակվել ուկրաինական առնվազն 25 քաղաքների օդանավակայանների եւ ռազմական ենթակառուցվածքների վրա: Այդ իրադարձությունները սկսվեցին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հայտարարությունից հետո:

Այս հայտարարությունից անցել է մեկ տարի: Armlur.am-ը փորձել է ամփոփել, թե ինչ է տեղի ունեցել այս ընթացքում, եւ ինչ իրավիճակ է այժմ: Նույն օրը Ուկրաինայի նախագահ Վ. Զելենսկին ռազմական դրություն հայտարարեց երկրում, ինչպես նաեւ համընդհանուր զորահավաք՝ բոլոր արական սեռի Ուկրաինայի քաղաքացիների համար՝ 18-ից մինչեւ 60 տարեկան, որոնց արգելվեց երկրից դուրս գալ:

Ռուսաստանի զորքերը սկզբնապես կատարվում էին հյուսիսային ռազմաճակատում՝ Բելառուսից դեպի Կիեւ, հյուսիսարեւելյան ռազմաճակատում՝ Խարկովի ուղղությամբ, հարավային ռազմաճակատում՝ Դրիմից, հարավարեւելյան ռազմաճակատում՝ Լուգանսկից եւ Դոնեցկից: Հյուսիսային ռազմաճակատում տալով ծանր մարդկային եւ ռազմատեխնիկական կորուստներ եւ հանդիպելով Ուկրաինայի բանակի ուժեղ դիմադրությանը Կիեւի շրջակայքում՝ Ռուսաստանի զորքերը ստիպված եղան դադարեցնել իրենց առաջխաղացումը մարտ ամսին, իսկ ապրիլ ամսին Ռուսաստանի զորքերը ստիպված եղան նահանջել: Ապրիլի 19-ին Ռուսաստանը մի նոր հարձակում ձեռնարկեց 500-կիլոմետրանոց (կամ 300-մղոնանոց) ռազմաճակատով մեկ, որը տարածվում էր Խարկովից մինչեւ Դոնեցկ եւ Լուգանսկ: Մինչեւ մայիսի 20-ը Ռուսաստանի զինված ուժերին հաջողվեց մի քանի ամիս տեւած դաժան պաշարումից, բազմաթիվ գրոհներից եւ ռմբակոծություններից հետո գրավել Մարիուպոլ քաղաքը՝ Ազովստալի մետաղաձուլական գործարանով: Ուկրաինական բանակի հարձակման հետեւանքով Խարկովի մարզի մեծ մասն ազատագրվեց արդեն սեպտեմբերին:

Ինչ վերաբերում է հարավային ռազմաճակատին, ապա այստեղ նոյեմբերին Ուկրաինան հետ գրավեց Խերսոն մարզային կենտրոնը, որը միակ մարզային կենտրոնն էր, որ Ռուսաստանին հաջողվել էր գրավել 2022թ. փետրվարին սկսված լայնածավալ պատերազմի ժամանակ: Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան իր բանաձեւով պահանջեց Ռուսաստանի զորքերի լիակատար դուրսբերումը Ուկրաինայից, իսկ Միջազգային արդարադատության ատյանը կարգադրեց Ռուսաստանին դադարեցնել ռազմական գործողություններն Ուկրաինայում, Եվրոպայի խորհուրդը Ռուսաստանին հեռացրեց իր շարքերից:

Բազմաթիվ երկրներ նոր պատժամիջոցներ դրեցին Ռուսաստանի վրա, ինչը բացասական ազդեցություն գործեց Ռուսաստանի տնտեսության վրա, թեպետ անմասն չմնացին նաեւ աշխարհի այլ երկրներ: Ուկրաինա լայնամասշտաբ ներխուժման սկզբից ի վեր զոհվել է ավելի քան 13 հազար ռուս զինվոր եւ սպա: Վերջին երեք ամիսների ընթացքում մահացածների մեծ մասը մոբիլիզացվածներ են, «Վագներ»-ի կամավորներ եւ վարձկաններ, այդ թվում՝ բանտարկյալներ: Այս մասին ասվում է BBC-ի ռուսական ծառայության եւ Mediazona-ի համատեղ հետաքննության մեջ: Հետաքննությունը հրապարակվել է փետրվարի 2-ին: Բաց աղբյուրներից լրագրողները տեղեկացել են 924 մոբիլիզացված ռուսաստանցիների մահվան մասին: Այս թիվը ներառում է հունվարի 1-ին Մակեեւկայի հրթիռակոծության ժամանակ զոհվածներին:

Պատերազմի առաջին փուլում ամենամեծ կորուստները կրել են օդադեսանային ուժերը, ծովային հետեւակայինները, Գլխավոր հետախուզական վարչության (ԳՐՈՒ) հատուկ ջոկատները, ինչպես նաեւ Ռուսաստանի գվարդիայի հատուկ ջոկատները՝ պրոֆեսիոնալ եւ լավ պատրաստված կազմավորումները, որոնք համալրված են հիմնականում պայմանագրային զինծառայողներով: Նաեւ Ուկրաինայի կողմից է տվյալներ հրապարակվել ռուսական բանակի կորուստների մասով: Ըստ այդ տվյալների՝ 2022 թվականի փետրվարի 24-ից մինչեւ 2023 թվականի փետրվարի 19-ը ռուսական բանակի զոհերի թիվը մոտ 142 860 է. այս մասին հայտնել է Ուկրաինայի զինված ուժերի գլխավոր շտաբը: Նշվում է նաեւ, որ ոչնչացվել է 3310 տանկ, 6545 զրահապատ մարտական մեքենա, 2327 հրետանային համակարգ, 298 ինքնաթիռ, 287 ուղղաթիռ, 873 թեւավոր հրթիռ, 224 միավոր հատուկ տեխնիկա եւ այլ սպառազինություն:

Իսկ ի՞նչ իրավիճակ է Ուկրաինայում: Ռուսական կողմից տվյալներ են հրապարակվել, որ, իսրայելական հետախուզության տվյալներով, Ուկրաինայի զինված ուժերն ունեն ավելի քան 400 հազար զոհ, որոնց շարքերում կան 5 հազար վարձկաններ: Ուկրաինան հերքել է այդ տվյալները:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի հետ:

Զրուցակիցներն անդրադարձել են Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին եւ դրա հաղթահարմանը վերաբերող թեմաների:

Մասնավորապես, քննարկվել են Լեռնային Ղարաբաղ եւ Լաչինի միջանցք ՄԱԿ-ի փաստահավաք առաքելություն ուղարկելուն առնչվող հարցեր:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, ԼՂ ժողովրդի իրավունքների պաշտպանությանը եւ անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ:

ԳՈՐԾՈՒՂՎԵԼ Է ԱԲՈՒ ԴԱԲԻ

ՀՀ ԱԺ նախագահի որոշմամբ՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանը գործուղվել է Աբու Դաբի (Արաբական Միացյալ Էմիրություններ):

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատգամավորը Աբու Դաբիում կմասնակցի IDEX-2023 ռազմաարդյունաբերական ցուցահանդեսին: Պատգամավորի գործուղման հետ կապված ճանապարհածախսի, օրապահիկի, ինչպես նաեւ գիշերավարձի հետ կատարած ծախսերը կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ԿՐԿԻՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ

ԱԺ աշխատակազմը կրկին պարգեւավճար է ստացել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հրամանագիր է ստորագրել, որով նախատեսվում է Ազգային ժողովի աշխատակազմի 2023 թվականի համար նախատեսված պարգեւատրման գումարը բաշխել ԱԺ աշխատակազմի աշխատողների միջեւ յուրաքանչյուր պաշտոնային դրույքաչափի 15 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ ՆՈՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորությամբ՝ փետրվարի 22-ին եւ 23-ին ամփոփվել են Երեւանի մի շարք վարչական շրջանների դատախազությունների՝ 2022 թվականի գործունեության արդյունքները: Գլխավոր դատախազին են ներկայացվել վարչական շրջաններում արձանագրված հանցավորության դեմքերը, դրանց բացահայտման ցուցանիշները եւ կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքները:

Մասնավորապես՝ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Վիգեն Միլիտոնյանի խոսքով՝ 2022 թվականին գրանցվել է հանցագործության 2688 դեպք (2021 թվականին՝ 1846): Հաշվետու ժամանակահատվածում վարչական շրջաններում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների աճ. աճել են սպանության փորձի դեպքերը (2022 թվականին՝ 4, 2021 թվականին՝ 1), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը (2022 թվականին՝ 12, 2021 թվականին՝ 6) եւ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված դեպքերը (2022 թվականին՝ 7, 2021 թվականին՝ 1): 2022 թվականի ընթացքում նվազում է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվաքանակում (2022 թվականին՝ 1128, 2021 թվականին՝ 1278): Ավան եւ Նոր Նորք վարչական շրջաններում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թվում եւս աճ է արձանագրվել (2022 թվականին՝ 103, 2021 թվականին՝ 68):

Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Սիսակ Խաչատրյանի խոսքով՝ 2022 թվականի ընթացքում գրանցվել է հանցագործության 2696 դեպք (2021 թվականին՝ 1950): Հաշվետու ժամանակահատվածում վարչական շրջանում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների աճ (2022 թվականին՝ 411, 2021 թվականին՝ 176): Աճել է նաեւ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թիվը (2022 թվականին՝ 1358, 2021 թվականին՝ 1335): Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը եւս 2022 թվականին, 2021 թվականի համեմատ, աճել են (2022 թվականին՝ 153, 2021 թվականին՝ 61):

Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Պետրոս Մարտիրոսյանի խոսքով՝ 2022 թվականի ընթացքում արձանագրվել է հանցագործության 4260 դեպք (2021 թվականին՝ 3134): Հաշվետու ժամանակահատվածում վարչական շրջաններում գրանցվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների 373 դեպք (2021 թվականին՝ 187): 2022 թվականին նվազում է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվում (2022 թվականին՝ 1232, 2021 թվականին՝ 1318): Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում 2022 թվականի ընթացքում աճ է գրանցվել նաեւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թվում (2022 թվականին՝ 141, 2021 թվականին՝ 71):

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Արամ Արամյանի խոսքով՝ 2022 թվականի ընթացքում արձանագրվել է հանցագործության 4883 դեպք (2021 թվականին՝ 3834): Հաշվետու ժամանակահատվածում վարչական շրջաններում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների 481 դեպք (2021 թվականին՝ 331): 2022 թվականի ընթացքում արձանագրված սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը, նախորդ տարվա համեմատ, նվազել են 30-ով (2022 թվականին՝ 2085, 2021 թվականին՝ 2115): Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների 167 դեպք (2021 թվականին՝ 94):

Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Գուրգեն Մադոյանի խոսքով՝ 2022 թվականի ընթացքում արձանագրվել է հանցագործության 2087 դեպք (2021 թվականին՝ 1879): Հաշվետու ժամանակահատվածում վարչական շրջաններում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների 290 դեպք (2021 թվականին՝ 272): 2022 թվականին արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործու-թյան 674 դեպք (2021 թվականին՝ 959): Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջաններում հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների 252 դեպք (2021 թվականին՝ 233):

Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը վարչական շրջանների դատախազներին հանձնարարել է ուսումնասիրել պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող, սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի օտարման կամ վարձակալության հանձնելու դեպքերը եւ քայլեր ձեռնարկել՝ խախտումներով օտարված հողերը պետությանն ու համայնքներին վերադարձնելու ուղղությամբ:

Գլխավոր դատախազը նաեւ հանձնարարել է ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթների քննությունը, ակտիվացնել նաեւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ քրեական ենթամշակույթի դեմ պայքարը:

ՏԵՍԱՔՆՆՈՒՄ

ԿԱՆԽՎԵԼ Է ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Օրերս ՀՀ ՊԵԿ Արեւելյան մասնաստուն վարչության Բագրատաշենի մասնային կետ-բաժին է ժամանել տրանսպորտային միջոց, որը, տարանցման հայտարարագրով ձեւակերպված, ՌԴ պետք է տեղափոխեր թարմ խաղող: Ստացված տեղեկությունների իրականացման նպատակով տեսազննման է ենթարկվել վերոնշյալ բեռնատարը: Տեսազննման արդյունքում պարզվել է, որ մասնային մարմինների կողմից դրված արգելակման միջոցը վնասված չի եղել:

Հետագա հսկողությունն ապահովելու նպատակով տրանսպորտային միջոցն ուղարկվել է ռենտգեն զննման: Ռենտգեն հսկողությունից խախտման հատկանիշներ չհայտնաբերվելուց հետո տրանսպորտային միջոցն ուղարկվել է խորը զննման անգար: Արդյունքում պարզվել է, որ արկղերի գերակշիռ մասը, որոնցով տեղափոխվել են ապրանքները, հատուկ հարմարեցված են, ունեն երկհատակ, ինչը ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոց է: Զննման արդյունքում հայտնաբերվել են մաքսային հսկողությունից թաքցված, մաքսային հսկողության ենթակա ապրանքներ՝ տարբեր տեսակի ծխախոտներ, ընդհանուր քանակը՝ 303 հազար 460 տուփ:

Իրավախախտման օբյեկտ համարվող ապրանքների տեսազննումից պարզվել է, որ մի մասի վրա առկա են ակցիզային դրոշմանիշներին նմանվող այլ պիտակներ, որոնք չեն համապատասխանում ՊԵԿ-ի կողմից տրամադրող ակցիզային դրոշմանիշներին, իսկ մնացած մասի վրա ընդհանրապես ակցիզային դրոշմանիշներ առկա չեն: Արարքն իր մեջ պարունակում է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 313 հոդվածի հատկանիշներ: Դեպքի առնչությամբ նյութերն ուղարկվել են ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախության վարչություն հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԴԵՀ Է ԲՌՆԿՎԵԼ

Փետրվարի 23-ին՝ ժամը 15:16-ին, Արարատի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Հովտաշատ գյուղի սկզբնամասում կրակ է նկատվում:

Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության եւ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից երկու մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Հովտաշատ գյուղի 1-ին եւ 2-րդ փողոցների տարբեր փակուղիներում այրվում են երկու անասնագոմ եւ բուսածածկույթ:

2-րդ օջախում հրդեհը մեկուսացվել է ժամը 16:30-ին, մարվել՝ 17:56-ին: Այրվել են անասնագոմի տանիքի (100 քմ) փայտե կառուցատարրերից մոտ 30 քմ հատված, մոտ 3000 քմ բուսածածկույթ եւ ջերմահարվել՝ մոտակայքում կայանած «Ford Transit» մակնիշի ավտոմեքենայի աջակողմյան հատվածը:

1-ին օջախում հրդեհը մեկուսացվել է ժամը 18:40-ին, մարվել՝ 18:59-ին: Այրվել են անասնագոմի բաղադրե տանիքը (24 քմ) եւ մոտ 500 քմ խոտածածկույթ:

ՀԱՆԿԱՐԾԱՄԱՀ ՉԻ ԵՂԵԼ

Փետրվարի 22-ին՝ ժամը 03:00-ին, շտապօգնության կայանից ոստիկանության Գորիսի բաժին հաղորդում էր ստացվել, որ կանչով մեկնել են Խնձորեսկ գյուղի տներից մեկը՝ բուժօգնություն ցույց տալու 49-ամյա տղամարդուն, սակայն նա եղել է մահացած: Բաժնից նշված հասցե օպերատիվ խումբ է մեկնել: Տան անդամները հայտնել են, որ նրա ինքնազգացողությունը կտրուկ վատացել է, եւ նա հանկարծամահ է եղել:

Այս մասին հայտնում են ոստիկանությունից:

Փաստով Գորիսի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, քրեական վարույթ է նախաձեռնվել:

Գորիսի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ՝ պարզվել է, որ փետրվարի 22-ի ժամը 17:00-ի սահմաններում Խնձորեսկ բնակավայրի վարչական տարածքի անասնագոմում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել են 49-ամյա տղամարդն ու 23-ամյա խնձորեսկցի երիտասարդը: Երիտասարդը հրել գցել է 49-ամյա տղամարդուն, ինչի հետեւանքով նա գլխի հետեւի մասով հարվածել է բետոնե ախոռին: Տղամարդն այնուհետեւ գնացել է տուն, որտեղ էլ ժամեր անց գլխի շրջանում ստացած վնասվածքների պատճառով մահացել է:

23-ամյա երիտասարդը տարվել է ոստիկանության Գորիսի բաժին եւ բացատրական աշխատանքի շնորհիվ խոստովանել կատարվածն ու ներկայացրել դիմում-մեղայական: Նա ձերբակալվել է: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Գորիսի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 58 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրի հիման վրա՝ Տեսչական մարմնի Երեւանի տարածքային ստորաբաժանման մասնագետները հրդեհատեխնիկական հետազոտություն են իրականացրել Երեւան քաղաքի Արշակունյաց 210/1 հասցեում գտնվող «Եռանկյունի առկենտ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունում տեխնիկական եւ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների պահպանման նկատմամբ:

Իրականացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ նշյալ հասցեում գտնվող շենքերն ու շինությունները շահագործվում են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների այնպիսի թերություններով ու խախտումներով, որոնք անմիջական եւ ուղղակի սպառնալիք կարող են ստեղծել հրդեհների առաջացման եւ մարդկանց անվտանգության համար:

Հիմք ընդունելով վերոնշյալ խախտումների վտանգավորության աստիճանը՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ ամբողջությամբ դադարեցվել է «Եռանկյունի առկենտ» ՍՊԸ գործունեությունը: Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրով սահմանվել է հայտնաբերված թերություններն ու խախտումները վերացնելու ժամանակացույց:

ՀԱԿԱԴԱՐՁԵԼ Է ՀԵՐՔՄԱՆԸ

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը վերջերս իր ֆեյսբուքյան էջում փաստաթուղթ էր հրապարակել Մյունխենում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների բանակցությունների վերաբերյալ՝ վերնագրելով այն «սկանդալային փաստաթուղթ»: Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանն էլ իր հերթին հայտարարել է, թե հրապարակված փաստաթուղթն իրականությանը չի համապատասխանում, Հայաստանն այդ կետերի շուրջ չի բանակցում: Արմեն Աշոտյանը, ArmLur.am-ի հետ զրույցում արձագանքելով Ախ քարտուղարի հերքմանը, հակադարձում է՝ իր հրապարակած փաստաթուղթն իրական է. «Ախ քարտուղար կոչվածը հայտնի է իր քրոնիկ սուտասանությամբ: Կյանքը, ցավոք, ցույց է տվել, որ այն, ինչ հերքել են Նիկոլ Փաշինյանը եւ իր ծառայամիտ շրջապատը, իրականությանը համապատասխանում է: Մեզանից խնամքով երկար ժամանակ թաքցրել են թե՛ բանակցային, թե՛ ռազմական, թե՛ այլ կարեւորագույն դետալներ, որոնք հայ ժողովրդի մեջքի հետեւում դավերի տեսքով հյուսվել են՝ մեր ազգային շահերի հաշվին: Արմեն Գրիգորյանի հերքումը գրոշի արժեք չունի, ես պնդել եմ, որ այդ սկզբունքներն իրական են, այդ առաջարկն իրական է եղել: Մնացած ամեն ինչը վատ խաղի ժամանակ լավ դեմք ընդունելու, այսպես ասած, «պոկեր ֆեյս» ընդունելու դատարկ ջանքեր են»,- ասաց նա:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՍԱԺՈՂՈՎ

ԱՐՑԱԽԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Փետրվարի 24-ին Երեւանում անցկացվող «Արցախի միջազգային ճանաչման հրամայականը» խորագրով համաժողովին ներկա են եղել մի շարք հասարակական-քաղաքական գործիչներ: Այս մասին իր կարծիքն է հայտնել ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը:

«Օրակարգը պետք է ընդլայնել, եռանկյունը դարձնել հնգանկյուն, վեցանկյուն, որպեսզի հնարավորություն լինի առեւտուր անելու եւ որեւէ փաստաթուղթ ստորագրելու:

Այսօր այլընտրանք կա. երբ խնդիր է դրված, որ Արցախը պետք է լինի Ադրբեջանի կազմում, մարդկանց ասում ես՝ այլընտրանք կա, միանգամից հայելային են մտածում, որ դրա այլընտրանքն այն է, որ Արցախը լինի անկախ կամ Հայաստանի մաս: Ոչ, ես այդպիսի խնդիր չեմ դնում, իմ այլընտրանքը հետեւյալն է. փաստաթուղթ ստորագրելու այլընտրանքը փաստաթուղթ չստորագրելն է: Մենք այսօր շատ համեստ խնդիր պետք է դնենք: ՀՀ իշխանություններն այսօր այդ հնարավորությունն ունեն:

Առաջինը այն կլինի, որ նրանք կարողանան այդ օրակարգն ընդլայնել, այնտեղ ներառել Շուշիի, Հադրութի խնդիրը, առանց ագրեսիվ լինելու: Մենք խնդիր չենք դնում դրանք հետ վերցնելու խնդիրը, կարելի է դա ձեւակերպել հետեւյալ կերպ. ի՞նչ է լինելու Շուշիի ու Հադրութի ճակատագիրը: Դա պետք է մտնի այդ օրակարգի մեջ, մեր գերիների վերադարձի խնդիրը, ԼՂ-ի կարգավիճակի խնդիրը, Ադրբեջանի զորքերի դուրսբերումը Հայաստանի տարածքից: Այդպիսի օրակարգով կարելի է ստեղծել մի փաթեթ, որի շուրջ հավերժ կարելի է բանակցել, եւ միջազգային հանրությունը շատ նորմալ կընդունի, որովհետեւ այն խնդիրները, որոնք այնտեղ դրվում են, դրանք ծայրահեղական, անիրատեսական պահանջներ չեն, դրանք մեր նվազագույն իրավունքներն են»,- հայտարարեց Վարդան Օսկանյանը:

Նա ընդգծեց, որ այս իշխանությունները շատ ավելի լայն հնարավորություններ ունեն այլընտրանքային տարբերակների, քան կունենար որեւէ այլ իշխանություն

Իսկ իր ելույթում միջազգային իրավունքի մասնագետ, փաստաբան Արամ Օրբելյանն ասաց, որ Արցախն ունի անկախության կարգավիճակ. «Այսինքն՝ բոլոր հանգամանքները կարող են քննարկվել. խնդիրն այն է, թե ինչ ֆորմատով եւ ինչի համար»:

Անդրադառնալով Լաչինի միջանքը բացելու մասին ՄԱԿ-ի միջազգային դատարանի միջանկյալ որոշմանը՝ Արամ Օրբելյանն ասաց, որ եթե դրան չի հետեւում այդ գործիքակազմի հետագա օգտագործումը, ապա այդ գործիքն ընդամենը դառնում է որոշում եւ վերահաստատում է Ադրբեջանի մոտեցումները. «Ավելին՝ արդյունքում դա դառնում է պարտություն մեզ համար, որովհետեւ դատական գործընթացում հայտնած որոշակի կարծիքներ հետագայում փորձելու են օգտագործել՝ ապացուցելու համար, որ Հայաստանն ունի դիրքորոշում, որ Արցախն Ադրբեջանի մաս է: Կան մարդիկ, որոնք ասում են՝ Արցախը հանձնենք Հայաստանը պահելու համար: Հեռվից որ նայում ես այդ ձեւակերպմանը, տրամանաբանական է, բայց Ադրբեջանն ասե՞լ է՝ Արցախը տվե՛ք, Հայաստանը՝ ձեզ. նա ասել է՝ Արցախը տվե՛ք, Հայաստանը տվե՛ք, Սյունիքը տվե՛ք, Սեւանը տվե՛ք, Երեւանը տվե՛ք: Բացում ենք Թուրքիայի փաստաթղթերի ազգային ուխտը, մնացածն էլ Թուրքիան է ուզում: Իրականում Ադրբեջանը ոչ թե մեզնից չի ուզում, այլ ուղղակի ասում է՝ դա ձերը չի, թուրքերինն է»:

Նա շեշտեց, որ միջազգային իրավունքում ուժի օգտագործումն արգելված է: ՄԱԿ-ի կանոնադրությամբ՝ բոլոր պետությունները պետք է ձեռնպահ կմնան ուժի օգտագործումից այլ պետության տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության կամ ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին հակասող այլ եղանակով:

ՊՆ-Ն ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

ԽԱԽՏԵԼ ԵՆ ՀՐԱՄԱՆԸ

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունը զինծառայողներին մշտապես հորդորում է զերծ մնալ արգելված իրեր պահելուց, մասնավորապես՝ սմարթֆոն տեսակի բջջային հեռախոսներ: Այս մասին սոցիալական ցանցի իր էջում գրել է ՊՆ մամուլի քարտուղար Արամ Թորոսյանը:

Նա նաեւ նշել է. «Չնայած այս հորդորներին՝ այնուամենայնիվ, շարունակելով զորամասերում ամենօրյա հետեւողական աշխատանքները, ռազմական ոստիկանության աշխատակիցները հայտնաբերում են սմարթֆոն տեսակի բջջային հեռախոսներ եւ այլ արգելված պարագաներ: Զինված ուժերում կարգապահության ամրապնդման, անվտանգության ապահովման համար եւս մեկ անգամ կոչ ենք անում զինծառայողների ծնողներին, ընկերներին սմարթֆոն տեսակի բջջային հեռախոսներ, արգելված իրեր չփոխանցել զինվորներին:

Պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, որ զինծառայողների շրջանում հայտնաբերված սմարթֆոն տեսակի հեռախոսները զինծառայողներին վերադարձվելու են միայն ժամկետային զինվորական ծառայությունն ավարտվելուց հետո:

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների ձեռնարկած մեծածավալ գործողությունների արդյունքում հայտնաբերվել, ՌՈ բաժիններ են տեղափոխվել ՀՀ ԶՈ մի շարք պարտադիր ժամկետային եւ պայմանագրային զինծառայողներ, որոնք, խախտելով ՀՀ ՊՆ N հրամանը, օգտագործել են սմարթ հեռախոսներ, զինվորական ծառայության առօրյայից լուսանկարներ են ներբեռնել համացանց: Զինծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հետամուտ է լինելու նմանօրինակ դեպքերի բացառմանը եւ կարգազանց զինծառայողներին ենթարկելու է պատասխանատվության»:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՆԱՅՎԵԼ ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքով, 2023 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած կարգավորումների համաձայն, վերանայվել են միկրոձեռնարկատիրության սուբյեկտների նկատմամբ կիրառելի կանոնները:

Մասնավորապես, 2023թ. հունվարի 1-ից միկրոձեռնարկատիրության սուբյեկտ չեն կարող հանդիսանալ այն կազմակերպությունները եւ անհատ ձեռնարկատերերը, որոնք ստանում են վարձակալական վճար, տոկոս կամ ռոյալթի, այսինքն՝ հանդիսանում են թվարկված եկամուտների մասով գործող պայմանագրի՝ վարձակալական վճար, տոկոս կամ ռոյալթի ստացող կողմ:

Իրականացված օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ 2023 թվականի հունվարի 1-ից սահմանափակվել է միկրոձեռնարկատիրության սուբյեկտներից ձեռքբերումների գծով ծախսագրումը, ըստ որի՝ շահութահարկ վճարողները համախառն եկամտից չեն կարող նվազեցնել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներից ձեռք բերված ապրանքների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով կատարվող ծախսերը:

Կոմիտեն հայտնում է, որ ՊԵԿ պաշտոնական կայքի «Էլեկտրոնային ծառայություններ» բաժնի «ՀՀ հարկ վճարողների փնտրման համակարգ» ենթաբաժնում ներկայացվում են հարկ վճարողների հարկման ռեժիմները, այդ թվում՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ տեղեկատվությունը: Նշված տեղեկատվությունը հասանելի է նաեւ հարկ վճարողների Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում՝ «Անձնական գրասենյակ» բաժնի «Հարկ վճարողներ» ենթաբաժնում:

Միաժամանակ, 2023 թվականի հուլիսի 1-ից միկրոձեռնարկատիրության սուբյեկտները, որպես հարկային գործակալ, չեն ազատվում ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից եկամտային հարկ հաշվարկելու պարտավորությունից, իսկ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին վճարվող կամ հաշվարկվող եկամուտներից եկամտային հարկը, ամսական 5000 դրամի փոխարեն, 2023 թվականի հուլիսի 1-ից կհաշվարկվի ընդհանուր սահմանված 20 տոկոս դրույքաչափով:

ԼՈՒՄՆԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ

Ազգային ժողովում Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ խորհրդարանական լսումներ են ընթանում «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Ռուբեն Սարգսյանն անդրադարձավ երեխայի խնամքով զբաղվող աշխատողների իրավունքներին:

«Որոշակի փոփոխություններ կատարել ենք այդ հոդվածներում: Հիմնական ուղղվածությունն առաջինը տարիքային փոփոխություններն են, ինչպես նաեւ ճկունություն ենք ապահովել:

Առկա կարգավորմամբ՝ մինչեւ երեխայի 1,5 տարեկան լրանալը կինն իրավունք ունի իր 30 րոպեանոց ընդմիջումները միավորելու ու տեղափոխելու կամ օրվա սկիզբ, կամ օրվա վերջ, կամ իր հանգստի՝ ընդմիջման հատվածին: Եթե նախկինում մինչեւ 1 տարեկան 6 ամսականն էր, նախատեսվում է երեխայի տարիքը տեղափոխել մինչեւ 2 տարեկան»,-ասաց փոխնախարարը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Ռուբեն Սարգսյանն անդրադարձավ կենսաթոշակային տարիքի հասած աշխատող անձանց իրավունքներին:

«Գիտենք բոլորս, որ կենսաթոշակային տարիքի շատ մարդիկ կան, որոնք ցանկանում են շարունակել աշխատել, եւ ավելին՝ շատ դեպքերում աշխատանքը նաեւ սոցիալական խնդիրներ է լուծում: Մեր Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածում կար աշխատանքից ազատման հիմքը. այժմ նախագծով առաջարկվում է հանել այդ հիմքը:

Վստահ եմ՝ կհիշեք, որ Աշխատանքային օրենսգրքով այժմ ամրագրված է, որ կենսաթոշակային տարիքի անցած քաղաքացու հետ անորոշ ժամկետով պայմանագիր կնքելը հնարավոր չէր: Նախագծով այդ հնարավորությունը նույնպես սահմանել ենք, ինչը եւ՛ աշխատողին, եւ՛ գործատուին հնարավորություն կտա փոխադարձ համաձայնության պարագայում շարունակել իրենց աշխատանքային հարաբերությունները»,-ասաց փոխնախարարը:

Այս փոփոխությունների շրջանակում անդրադարձ է կատարվել նաեւ աշխատողների հանգստին վերաբերող կարգավորումներին:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Ռուբեն Սարգսյանի խոսքով՝ ներկայում, եթե աշխատողը արձակուրդ գնալու դիմում չի ներկայացնում, ապա գործատուն որեւէ լիազորություն չունի մարդուն արձակուրդ ուղարկելու:

«Առաջարկվող կարգավորումով սահմանվում է՝ եթե աշխատողը 2.5 տարի անընդմեջ արձակուրդի դիմում չի ներկայացնում, ապա գործատուն իրավունք է ստանում աշխատողին իր հայեցողությամբ ուղարկել արձակուրդի:

Եթե գործատուն աշխատողին, իր դիմումի համաձայն, արձակուրդ չի տրամադրում, ապա նախատեսվում է տուժանք՝ աշխատավարձի 0.15 տոկոսի սահմաններում (աշխատողի միջին ամսական աշխատավարձի)»,- ասաց Ռուբեն Սարգսյանը:

Գործող կարգավորումներով՝ աշխատող-գործատու հարաբերություններ սկսելուց 6 ամիս անց էր միայն աշխատողին արձակուրդի հնարավորություն տրամադրվում: Հիմա ավելի ճկուն հնարավորություն է տրվել. դա կթողնվի աշխատող-գործատու հայեցողության վրա:

Ռուբեն Սարգսյանը նշեց, որ ընդլայնվել է աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չհամարվող հանգամանքների ցանկը:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չեն կարող համարվել մաշկի գույնը, ինչպես նաեւ աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներ:

Փոփոխության կենթարկվի նաեւ արտաժամյա աշխատանքի վերաբերյալ օրենսդրությունը: Գործող օրենսդրությամբ սահմանվում են այն դեպքերը, երբ արտաժամյա աշխատանքը հնարավոր է:

«Փորձում ենք ճկունություն ապահովել: Եթե աշխատողի եւ գործատուի համաձայնությունը լինի, ապա աշխատողը կարող է արտաժամյա աշխատանք իրականացնել, վճարվել դրա համար: Որոշակի սահմանափակումներ պահպանել ենք»,- նշեց Սարգսյանը:

Բացի այդ, հստակեցվել են վերջնահաշվարկ չկատարելու դեպքերը: Գործատուն աշխատողի հետ վերջնահաշվարկ չի կատարում, եթե աշխատողը նույն գործատուի հետ առանց աշխատանքային պայմանագրի լուծման, փոխադրման, տեղափոխման, այլ աշխատանքի է անցնում:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ԸՆԴԼԱՅՆԵԼ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Կոնվերս բանկ»-ն ընդլայնել է թվային հարթակներում ֆինանսավորման գործիքակազմը:

Snap ֆինանսավորումն արդեն հասանելի է «Կոնվերս մոբայլ» հավելվածում: Այս պրոդուկտի ներդրմամբ բանկն ընդլայնում է թվային հարթակներում ֆինանսավորման գործիքակազմը՝ զգալիորեն մեծացնելով ֆինանսական միջոցների հասանելիությունն իր հաճախորդների համար 24/7 ռեժիմով: Ակնթարթային ֆինանսավորման համար չեն պահանջվում լրացուցիչ փաստաթղթեր եւ երաշխավորներ: Կիրառվում է անհատականացված, պարզ տոկոսադրույք. թաքնված այլ վճարներ, այդ թվում՝ տրամադրման եւ սպասարկման վճար, նախատեսված չէ:

Մինչեւ 10 մլն ՀՀ դրամի չափով, 36 ամիս մարման ժամկետով ակնթարթային ֆինանսավորումից օգտվելու համար անհրաժեշտ է Մոբայլ հավելվածի վերին անկյունի «+» բաժնում ընտրել «Ստանալ վարկ»-ը եւ հետեւել հրահանգներին: Գումարն ընթացիկ կամ քարտային հաշվին է մուտքագրվում 1-2 րոպեում: Բանկում նշել են նաեւ, որ ֆինանսավորման կարող են դիմել նաեւ «Կոնվերս բանկ»-ի հաճախորդ չհանդիսացող անձինք՝ այցելելով ցանկացած մասնաճյուղ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍՊԱՍՎՈՒՄ Է ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Երեւանի երիտասարդական թատրոնի եւ իրանական «Թանդիս» թատերախմբի համագործակցության արդյունքում փետրվարի 26-ին Երեւանում կներկայացվի «Յոթ գեղեցկուհիներ» բեմադրությունը: Փետրվարի 24-ին լրագրողների հետ հանդիպմանը ներկայացման ռեժիսոր, սցենարիստ եւ գլխավոր դերակատար Համիդ Շեյխին ասեց, որ «Թանդիս» թատերախումբը ստեղծվել է համավարակի տարածման տարիներին: Այն հաջողության է հասել Իրանում եւ երկու տարի շարունակ ճանաչվել է ամենաարդյունավետ գործող ստեղծագործական թիմ:

««Յոթ գեղեցկուհիներ» ներկայացումը սիրվել է Իրանում: Հայերի ու պարսիկների մշակութային ու պատմական ընդհանրությունները շատ են, ուստի որոշեցինք նաեւ հայ հանդիսատեսին բեմադրությունը դիտելու հնարավորություն ընձեռել: Ներկայացման մեջ ընդգրկված են ինչպես պարսիկ, այնպես էլ հայ դերասաններ»,- նշեց ռեժիսորն ու հիշեցրեց՝ երկու ազգերը դարեր շարունակ ապրել են կողք կողքի, եւ պատահական չէ, որ ներկայացմամբ անդրադարձել են Սասանյանների ժամանակաշրջանին, երբ հայերն ու պարսիկները, կարող ենք ասել, նույն երկրում են ապրել:

Համիդ Շեյխին բեմադրության մեջ մարմնավորում է Սասանյանների դինաստիայի Վահրամ 5-րդ արքային, որն իշխել է եւ՛ Հայաստանին, եւ՛ Պարսկաստանին: Ներկայացմամբ ցույց են տվել այն շրջանը, երբ արքան ամուսնանում էր տարբեր երկրների արքայադուստրերի հետ:

«Հայերին արյունակից եղբայրներ ենք համարում եւ բեմադրությամբ, որը հայերեն ու պարսկերեն է, փորձել ենք ներկայացնել եւ՛ հայերի, եւ՛ պարսիկների, եւ՛ ռուսների ու այլ երկրների մշակույթները: Այդ շրջանին հատուկ հագուստների միջոցով կոլորիտային միջավայր ու մթնոլորտ ենք ստեղծել»,-շեշտեց նա:

Ռեժիսոն ասում է, որ շատ երկրներում է եղել, սակայն Հայաստանում իրեն զգում է, ինչպես տանը:

Նա հույս ունի, որ Հայաստանի հետ համագործակցությունը շարունակական բնույթ կունենա, եւ ինքը հայ արտիստների մասնակցությամբ կբեմադրի նաեւ «Շարզադ» ներկայացումը, որը Պարսկաստանում մեծ հաջողություն է ունեցել:

Երիտասարդական թատրոնի եւ «Թանդիս»-ի համագործակցությունը կայացել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնի, «Հայաստան» կրթամշակութային ակումբի աջակցությամբ, որը կամուրջ է Հայաստանի եւ այլ երկրների կրթամշակութային կառույցների միջեւ:

ՈՒԺԵՂ ՄԱՐԴ

ՈՐՏԵ՞Ղ Է ՆՇԵԼ 31-ԱՄՅԱԿԸ ՏԱԹԵՎԻԿ ԱԴՈՒՄՅԱՆԸ

Դերասանուհի Տաթեւիկ Ադումյանը երեկ նշել է ծննդյան 31-րդ տարեդարձը: Դերասանուհին տարեդարձը նշել է ընտանիքի հետ Եգիպտոսում: Օրվա առթիվ դերասանուհին կիսվել է հետաքրքիր գրառմամբ եւ լուսանկարներով:

«Փետրվարի 23: Այդ օրը ծնվեց մի աղջիկ, եւ ինչպես բոլոր նորածինները, նա էլ չգիտեր՝ ինչ կյանք է իրեն սպասում առջեւում: Ի՞նչ դասեր եւ փորձություններ, ի՞նչ վերելքներ եւ հիասթափություններ, ի՞նչ ճանապարհներ եւ խոչընդոտներ: Այդպես անցան օրեր, օրերը դարձան ամիսներ, ամիսները՝տարիներ, տասնամյակներ: Մի բան, սակայն, միշտ մնում էր անփոփոխ. աղջկան կյանքի տարբեր փուլերում շրջապատում էին լավ մարդիկ, հարազատներ, իսկապես սիրող եւ գնահատող, հոգատար մարդիկ: Այդ աղջիկը ես եմ, եւ ես այդ մարդկանց երախտապարտ եմ անկեղծ սեր եւ ուժ պարգեւելու համար: Երախտապարտ եմ ինձ, հպարտ եմ ինձնով, քանի որ այնքան բանի միջով եմ անցել, որ երբեւիցե միգուցե այդ մասին չբարձրաձայնեմ: Այսօր ես կանգնած եմ այստեղ եւ գիտեմ, որ ապագան նույնպես լի է փորձություններով... եւ ավելի, քան երբեւէ, ես լի եմ վճռականությամբ: Ես հավատում եմ ինձ եւ հավատում եմ , որ գեղեցիկ է ուժը, եւ ուժի մեջ է գեղեցկությունը: Շնորհավո՛ր ծնունդդ, ուժեղ մարդ»,- գրել է նա:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՈՒ ՄԱՄՆԱԿԻՑ

Հայաստանի աթլետիկայի հավաքականը երկու ներկայացուցիչ կունենա Եվրոպայի ձմեռային առաջնությանը:

Ստամբուլում կայանալիք Եվրոպայի առաջնությանը Հայաստանից կմասնակցեն 2 եռացատկորդ՝ Լեւոն Աղասյանը եւ Յանա Սարգսյանը: Մարզիկները մրցավայր կմեկնեն փետրվարի 28-ին: Տղամարդկանց որակավորման փուլը կկայանա մարտի 2-ին, իսկ եզրափակիչը՝մարտի 3-ին, կանանց որակավորման փուլը՝ մարտի 3-ին, եզրափակիչը՝մարտի 4-ին:

Աթլետիկայի Եվրոպայի ձմեռային առաջնությունը կկայանա մարտի 2-5-ը Ստամբուլում: 26 մրցաձեւերում իրենց ուժերը կփորձեն 593 մարզիկներ 47 երկրից:

ԿԱՐԻԵՐԱՆ ԱՎԱՐՏԵՑ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի պաշտպան Սերխիո Ռամոսը սոցիալական ցանցերում արած գրառումով հայտարարել է Իսպանիայի հավաքականում կարիերան ավարտելու մասին:

36-ամյա ֆուտբոլիստը նշել է, որ Իսպանիայի հավաքականի նորանշանակ գլխավոր մարզիչ Լուիս դե լա Ֆուենտեն իր հետ զրույցում տեղյակ է պահել, որ մտադիր չէ իրեն հրավիրել ազգային թիմ: Ռամոսը 180 հանդիպում է ացկացրել Իսպանիայի հավաքականում եւ այդ ցուցանիշով ռեկորդակիրն է: Նա 23 գոլ է խփել ազգային թիմում: Նա դարձել է աշխարհի չեմպիոն եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն:

ՆՈՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ՝ ՍԻԹՔՈՄՈՒՄ

Մարտի 7-ից Արմենիա TV-ի եթերում կթողարկվի «Սյուրպրիզ» սիթքոմի երկրորդ եթերաշրջանը: Գրիգոր Դանիելյանի խոսքով՝ այս եթերաշրջանում, բացի գլխավոր «սյուրպրիզից», կա նաեւ այլ «սյուրպրիզ»:

Իրենց դերասանական կազմին են միացել Մարիամ Ալեքսանյանը, Վաչե Երիցյանը եւ Լեռնո Հարությունյանը:

«ՌԵԱԼԻ»–Ն ՉԵՆ ՕԳՆԻ

Մադրիդի «Ռեալի» 30-ամյա ավստրիացի պաշտպան Դավիդ Ալաբան եւ 22-ամյա բրազիլացի հարձակվող Ռոդրիգո Գոեսն առաջիկա հանդիպումներում չեն կարողանա օգնել իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած թիմին. հաղորդում է Արքայական ակումբի մամուլի ծառայությունը:Նրանք ոտքի մկանային վնասվածքներ են ստացել «Լիվերպուլի» դեմ Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի առաջին խաղում: «Ռեալն» Անգլիայում հաղթել էր 5:2 հաշվով, Ալաբան փոխարինվել էր 27-րդ րոպեին, Ռոդրիգոն՝81-րդ րոպեին:

Նշվում է, որ Ալաբան բաց կթողնի մեկ ամիս, Ռոդրիգոն՝10 օր:

Նրանք չեն կարողանա մասնակցել Մադրիդի «Աթլետիկոյի» (փետրվարի 25) եւ «Բարսելոնայի» (մարտի 2) դեմ հանդիպումներին Իսպանիայի առաջնությունում:

● *Փետրվարի 26-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Գեղեցկուհին եւ հրեշը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-2000 դրամ: Սկիզբը՝ժամը 13:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ հանցագործության կատարման մասին հաղորդում ներկայացնել. ո՞ւմ դիմել եւ ինչպե՞ս:

Վահե Մկրտչյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանա-վոր: Բանավոր կարգով հանցագործության մասին հաղորդում տալու համար անհրաժեշտ է ահազանգել ոստի-կանություն հետեւյալ հեռախոսահամարով՝ 1-02, կամ անձամբ ներկայանալ ոստիկանության տարած-քային բաժանմունք եւ հերթապահող հետաքննիչին բանավոր ներկայացնել կատարված կամ նախապատ-րաստվող հանցագործության մասին տվյալները: Ձանգի դեպքում, Ձեր հայտնած տեղեկությունների հիման վրա, ոստիկա-նությունում գրանցվում է ահազանգ՝դեպքի մասին, որից հետո հերթապահող ոստիկանության աշխա-տակիցները անհապաղ կներկայանան դեպքի վայր՝ տեղում պարզելու մանրամասները, որից հետո Ձեզ կհրա-վիրեն բաժին Ձեզանից հաղորդում ընդունելու նպատակով:

ՀՀ Ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հանցագործության մասին հաղորդում հնարավոր է ներկայացնել նաեւ գրավոր կերպով: Անհրաժեշտ է նախապես ձեռագիր կամ տպագիր տարբերակով մանրամասն նկարագրել կատարված կամ նախապատրաստվող հանցագոր-ծությունը, նշել այն կատարած անձանց վերաբերյալ Ձեզ հայտնի մանրամասներ եւ տվյալներ, իսկ այդպիսիք առկա չլինելու դեպքում՝ նկարագրել հանցագործություն կատարած անձին, հանցագործության կատարման հանգա-մանքները, մանրամասներ, թե ինչպես եւ որտեղ եք ականատես եղել հանցագործության կատարմանը: Գրավոր հաղորդման մեջ պետք է նշեք Ձեր անուն-ազգանունը, անձնագրային տվյալները, հասցեն եւ հեռախոսահամարը եւ այն ստորագրելուց հետո ուղարկել ոստիկանության այն տարածքային բաժին, որի տարածքում կատարվել է հանցագործությունը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հարեւանս ապօրինի շինարարություն է անում եւ փակում իմ տան լուսավորությունը: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Գայանե Աղաբեկյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շինարարություն իրականացնելու համար անհրաժեշտ է թույլտվություն ստանալ, որի շրջանակներում էլ ստուգվում են շինարարության ժամանակ անհրաժեշտ շինարարական նորմերը: Եթե անձը շինարարության համար թույլտվություն չի ստացել, կամ թույլտվությունը տրվել է շինարարական նորմերի խախտմամբ, ապա տվյալ շինարարությունը կարող է համարվել ապօրինի:

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում՝ հարկ է նշել, որ քաղաքացիների կողմից ապօրինի շինարարություն իրականացնելու դեպքում այդ մասին պետք է ահազանգել ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, քանի որ օրենքով սահմանված են ապօրինի շինարարության իրականացման համար պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Աստղիկ» բկ-ում բնական ճանապարհով ծնվել է 5 կգ 160 գ քաշով տղա երեխա:

Մանկաբարձ-գինեկոլոգն է Աննա Սահակյանը,

իսկ մանկաբույժը՝ Լաուրա Ավետիսյանը: Փոքրիկը եւ մայրիկն իրենց լավ են զգում եւ շուտով պատրաստ կլինեն դուրսգրման:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: